



Funded by the European Union



*Մեկը Էներգաարդյունավետության միջոցառումներից, որոնք Ծրագրի շրջանակներում իրականացվել և օգուտ են բերում ՀՀ Շիրակի մարզի 19 համայնքներում*

## **Պեմզաշենի 7-րդ փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 12 բազմաբնակարան շենքի ընդհանուր օգտագործման տարածքների ջերմաարդիականացում**

### **ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝**

Բազմաբնակարան շենքի աստիճանավանդակների և ձեղնահարկային ծածկի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում

### **ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝**

Էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումներն իրականացվել են «Կանաչ էներգիան Շիրակի մարզում՝ հանուն «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի» ծրագրի շրջանակներում՝ էներգաարդյունավետության տեխնոլոգիաների կիրառման արդյունքում համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը ցուցադրելու նպատակով:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝

Ցուցադրական բազմաբնակարան շենքի (2 մուտք, 24 բնակարան) աստիճանավանդակներում տեղադրվել են էներգաարդյունավետ դռներ և պատուհաններ, կառուցվել են նախամուտքեր, իրականացվել է արտաքին պատերի (ներքին մակերևույթների) ջերմամեկուսացում փրփրապոլիստիրոլե սալերով (գիպսաստվարաթղթե երեսապատմամբ) և տանիքի ձեղնահարկային ծածկի ջերմամեկուսացում՝ հանքային բամբակե ներքնակների միջոցով: Շենքի աստիճանավանդակներում իրականացվել են նաև էներգաարդյունավետ լուսավորման համակարգերի կառուցում՝ լուսադիոդային լամպերով և շարժման տվիչներով:

### ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ

№	Օգուտներ (տարեկան)	Քանակ
1	<b><i>Տնտեսական.</i></b> <ul style="list-style-type: none"><li>• տնտեսվող ջերմային էներգիա</li><li>• դրա շնորհիվ խնայվող դրամական միջոցներ</li></ul>	7500 կՎտ*ժ 140000 դրամ
2	<b><i>Բնապահպանական.</i></b> մթնոլորտ չարտանետվող CO <sub>2</sub> գազ	1,5 տ
3	<b><i>Սոցիալական.</i></b> <ul style="list-style-type: none"><li>• յուրաքանչյուր բնտանիքի կողմից տնտեսվող միջին գումար</li><li>• շենքի բնօրինակի օգտագործման տարածքներում հարմարավետության մակարդակի բարձրացում, գեղագիտական տեսքի բարելավում</li><li>• ցուցադրվում է բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումների օգուտները</li></ul>	5800 դրամ

ՊԵՄՁԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՋԵՐՄԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ  
ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՄԻՉ ՆՅՈՒԹԵՐ



*Աստիճանավանդակի լուսադիտողային լամպը շարժման տվիչով*



*Մուտքի դռան ինքնավար փակման սարքը*



*Աստիճանավանդակի արտաքին պատի փրփրապոլիստիրոլե սալերը*



*Աստիճանավանդակի պատուհանների կառուցվածքը*



*Ձեղնահարկային ծածկի հանքային բամբակե ներքնակները*

**ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ.** Արկաղի Թաղնույան, հեռախոս. 077 71 11 75



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝**

**Կանաչ Տեխնոլոգիաների Հայկական Կենտրոն**

Հասցե՝ քաղաք Գյումրի, Կարեն Դեմիրճյան փողոց, 3-րդ նրբանցք, 14 տուն

Հեռախոս՝ 077-99-34-77; 093-22-12-03

Էլ. փոստ՝ [greentech.arm@gmail.com](mailto:greentech.arm@gmail.com)

Կայք՝ <http://agtc.am/>

*Էներգաարդյունավետ տեխնոլոգիական համակարգերը նախագծվում և իրականացվում են մեզ մոտ*